

**ՌՈՒՍԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ ՕՍՄԱՆՅԱՆ
ԿԱՅՅՐՈՒԹՅՈՒՆՈՒԲ (19-ՐԴ ԴԱՐ-20-ՐԴ ԴԱՐԻ ՄԿԻՉԲ)**

Բանալի բառեր՝ հուշարձաններ, ռուս-թուրքական հարաբերություններ, մշակութային եղեռն, այլադաստիակություն, Ռուսական կայսրություն, Օսմանյան կայսրություն

Ռուսական հուշարձանները Թուրքիայում հանդիսացել են թուրք-ռուսական պատերազմներում թուրքերի պարտությունների խորհրդանիշներ, որոնք թուրքերն անվանում էին «ամոթի հուշարձան»։ Ռուս-թուրքական հարաբերությունների անկանոն բնույթի մասին փաստող վկայությունների մեջ կարևոր դեր ունեն նաև Օսմանյան կայսրության և հետագայում նաև Թուրքիայի Հանրապետության տարածքում կանգնեցված ռուսական հուշարձանները։ Թուրքիայում ռուսական հուշարձանները սկսել են ի հայտ գալ 19-րդ դարի առաջին կեսից, դրանց մի մասը տարբեր հանգամանքների բերումով ավիրվել են, որոշներն էլ հասել են մինչև մեր օրեր։ Հուշարձանների կառուցման և քանդելու տարեթվերը իրենց հերթին խորհրդանշում են ռուս-թուրքական հարաբերություններում որոշակի զարգացումների մասին։

Թուրքիայում մեզ հայտնի ռուսական հուշարձաններից առաջինը կանգնեցվել է Բեյքոզում Բոսֆորի ափին 1833 թ. և այն կոչվել է Moskof Taşı (Մոսկվայի քար)։ 1832 թ. Եգիպտոսի կառավարիչ Մեհմեդ Ալին ապստամբում է սուլթան Մահմուդ II-ի դեմ։ Սուլթանը հույների դեմ պատերազմին մասնակցելու դեպքում Մեհմեդ Ալին խոստացել էր կարգել նաև Սիրիայի կառավարիչ, սակայն խոստումը դրժել էր։ Ալին էլ իր որդու՝ Իբրահիմի հրամանատարությամբ զորք ուղարկեց Սիրիա այն զենքի ուժով գրավելու համար։ Եգիպտական բանակը, որն օսմանյան բանակից ավելի մարտունակ էր և փորձառու, առանց դժվարության մտավ Գազա և Իսրայել՝ շարունակելով իր առաջխաղացումը դեպի Սիրիա։ Անցնելով Տավրոսի լեռները՝ Իբրահիմի զորքը գրավեց Զոնյան, այնտեղից էլ շարժվեց Բուրսա՝ ճանապարհ բացելով դեպի

¹ ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թուրքագիտության ամբիոնի մագիստրատուրայի ուսանող, էլ. փոստ՝ gor.hovhannisyam7@ysumail.am

մայրաքաղաք: Իբրահիմը նպատակ ուներ գրավել Ստամբուլը՝ այդ կերպով հաստատելով իրենց իշխանությունը կայսրության տարածքում²: Հասկանալի էր, որ առանց արտաքին օգնության Օսմանյան կայսրությունը չէր կարող դիմակայել այս վտանգին: Ֆրանսիան լավ հարաբերություններ ուներ Մեհմեդ Ալիի հետ և, հետևաբար, նրանցից որևէ սպասելիք չէր կարող լինել³: Մահմուդ II-ն օգնության խնդրանքով դիմեց Մեծ Բրիտանիայի կառավարությանը: Օսմանյան կայսրությունում բրիտանական դեսպան Սթրեթֆորդ Քաննինգը աջակցեց սուլթանին, սակայն բրիտանական կառավարությունը անպատասխան թողեց սուլթանի խնդրանքը⁴: Ի վերջո, օգնության առաջարկ եկավ Ռուսաստանից: 1832 թ. վերջին Ստամբուլ ժամանեց ռուս հրամանատար Մուրավյովը, ով սուլթանին ներկայացրեց Պետերբուրգի դիրքորոշումը՝ «Կայսրը (Նիկոլայ Առաջինը Գ.Հ.) խռովության թշնամին է և Ձերդ մեծության ընկերը: Եթե փաշան չդադարեցնի իր անհնազանդությունը և շարունակի ռազմական գործողությունները, գործ կունենա Ռուսաստանի հետ»⁵: Ստանալով ռուսական օգնության առաջարկը՝ սուլթանը հոժարակամ ընդունեց այն: 1833 թ. փետրվարին ռուսական նավատորմը՝ ծովակալ Միխայիլ Լազարևի հրամանատարությամբ Սևաստոպոլից ուղևորվեց Ստամբուլ⁶: Նրանց միացան նաև այլ ռուսական ուժեր: Բոսֆորի ափին՝ Բեյքոզում, բանակ դրած ռուսական զորքի ընդհանուր թիվը 11 000 էր: Ի վերջո, ռուսների ժամանումը տվեց ցանկալի արդյունքը: Ռուսական զորքի ներկայությունը թույլ չտվեց Մեհմեդ Ալիին շարունակել ռազմական գործողությունները: Անգլիան և Ֆրանսիան էլ, անհանգստանալով ռուսների՝ Ստամբուլում գտնվելու հանգամանքից, ստիպեցին Ալիին բանակցություններ սկսել սուլթանի հետ: 1833 թ. ապրիլին սուլթանի և Մեհմեդ Ալիի միջև կնքվեց Քյութահիայի պայմանագիրը, որով վերջ դրվեց եգիպտական ապստամբությանը:

² Бальфур Д., Османская Империя, шесть столетий от возвышения до упадка XIV-XX вв.: Центрполиграф, Москва, 2017, стр. 468.

³ Ünal F., Ruslar tarafından 1833'de Beykoz/Selvi Burnu'na dikilen kaya anıtı “Moskof Taşı” (Камень Московитов): Türkiyat Mecmuası C.23/Güz, s. 187-206, İstanbul, 2013, s. 189.

⁴ Бальфур Д.П., նշված աշխ., էջ 469:

⁵ Муравьев Н.В., Русские на Босфоре в 1833 году, Москва, 1869, стр. 54.

⁶ Ünal F., նշված աշխ., էջ 190.

Նույն թվականի հուլիսի 8-ին կնքվեց Հունքյար-Իսքելեհի ռուս-թուրքական դաշնագիրը, որի համաձայն՝ պատերազմական իրավիճակում Օսմանյան կայսրությունը պետք է փակեր նեղուցները բոլոր պետությունների համար՝ բացի Ռուսաստանից: Պայմանագիրը նաև ներառում էր ռազմական փոխօգնության որոշակի դրույթներ⁷: Պայմանագրի կնքումից 2 օր անց ռուսական զորքը դուրս եկավ Ստամբուլից:

Մուրավյովը Ստամբուլը քելուց առաջ ցանկանում էր մի հուշարձան կանգնեցնել՝ ի պատիվ ռուսական զորքի՝ Բոսֆոր գալու և ռուսների տարած դիվանագիտական հաղթանակի: Վերջինս իր հուշերում գրում էր. «Ես վաղուց էի մտածում, որ պետք էր թողնել մի նշան՝ Բոսֆոր մեր ժամանելու հետ կապված, որով մեր սերունդները կհիշեին մեր հայտնի արշավանքի մասին»⁸: Սակայն այդ մտահղացմանն ընդդիմանում է կոմս Ալեքսեյ Օրլովը, ով ստանձնել էր ռուսական զորքի հրամանատարությունը Ստամբուլում. «Նա գտնում էր, որ այն կարող էր տհաճ հիշողություններ առաջացնել թուրքերի մոտ և առաջ բերել օտարերկրացիների դժգոհությունը: Վերոնշյալ պատճառներով, կամ առիթներով նա ինձ մերժեց»⁹:

Սակայն Մուրավյովը չիրաժարվեց իր ծրագրից: Նա Օրլովին փոխանցեց, որ նպատակահարմար կլինի վերադառնալուց առաջ ճամբարում միասնական աղոթք անցկացնել, քահանաների ծառայության վայրում էլ անհրաժեշտ էր գոնե մի անտառ քար կանգնեցնել. «Նա թույլ տվեց ինձ անտառ քար կանգնեցնել, և քանի որ քարի չափի մասին որոշում չկար, գլխիս մեջ միտք հղացավ կանգնեցնել քար այնպիսի մեծության, որ մեր ուժերը թույլ կտային՝ եթե ոչ արվեստով, գոնե քարի մեծությամբ հետագա սերունդներին քարը տեղադրողի նպատակը ցույց տալու համար»¹⁰: Մուրավյովը անմիջապես սկսեց աշխատանքները, ճամբարում հայտարարություն տարածվեց գաղափարի մասին և սկսվեց դրամահավաք, որի արդյունքում հավաքվեց ավելի քան 800 ռուբլի: Համապատասխան չափի

⁷ Бальфур Д.П., նշված աշխ., էջ 469.

⁸ Муравьев Н.В., նշված աշխ., էջ 411.

⁹ Նույն տեղում:

¹⁰ Նույն տեղում:

քար գտան Բոսֆորի եվրոպական ափին՝ Բալթայիմանում, որտեղից էլ այն բերվեց Բեյքոզ: Աշխատանքներին մասնակցում էր ավելի քան 400 հոգի: Ահռելի ժայռակտորը մեծ դժվարությամբ տեղափոխվեց Բեյքոզ, իսկ այն Սելվի Բուրնու բարձրացնելու համար հավելյալ ուժեր ներգրավվեցին՝ մոտ 1000 մարդ: Օրինակ ծառայելու նպատակով աշխատանքներին մասնակցում էր նաև սպայական կազմը՝ անձամբ Մուրավյովի գլխավորությամբ: Հատկանշական է, որ աշխատանքներին մասնակցում էին նաև թուրք զինվորականներ, Մուրավյովն էլ իր հուշերում գրում էր, որ «նաև եկավ իմ հին բարեկամ դերվիշը, ով իր բարձր ձայնով կոչ էր անում մուսուլմաններին մասնակցել աշխատանքներին»¹¹:

Քարը տեղադրեցին բարձունքին իր սկզբնական տեսքով. դրա բարձրությունը 3135 մետր էր (1/2 արշին), լայնությունը՝ 1514 մետր, իսկ ծանրությունը հասնում էր 24,5 տոննայի (1500 փուղ): Օսմանյան կայսրությունում հուշարձանը հայտնի էր Moskof Taşı (Մոսկվայի քար) անունով, իսկ ռուսներն այն անվանում էին Камень Московитов: Տեղադրումից հետո Մուրավյովը ցանկանում էր գրություն թողնել դրա վրա: Նա ծրագրել էր քարի վրա գրել՝ В память Олега, полки Николая (Ի հիշատակ Օլեգի¹², Նիկոլայի զորագնդեր): Սակայն այս գաղափարը նույնպես հանդիպեց Օրլովի դիմադրությանը: Վերջինս նշում էր, որ նման գրությունը կարող էր անվստահության զգացմունք առաջացնել թուրքերի մոտ¹³: Ի վերջո, Մուրավյովը հանձնարարեց զորքում եղած բանաստեղծներին հարմար քառատող ներկայացնել՝ հուշարձանի գրության համար: Ստացվեցին հետևյալ երկու քառատողերը.

Где щить Олега пронесла
Славянь дружина боевая,
Тамъ днесъ десница Николая
Знамена дружбы развила.

Այնտեղ, որտեղ Օլեգի վահանն
իր ետևից տարավ սլավոնների քաջ
զորքը,
այժմ Նիկոլայի աջը ծածանեց
եղբայրության դրոշակը:

¹¹ Նույն տեղում, էջ 413:

¹² Օլեգը 882-912 թթ. Կիևյան Ռուսիայի իշխանն էր, ով 907 թ. արշավել էր Կոնստանդնուպոլիս՝ պաշարելով այն:

¹³ Նույն տեղում:

Залогомъ дружбы Николая,
На страх Махмудовымъ врагам,
Дружина Русскихъ боевая
Примкнула здесь къ его полкамъ.

Ռուսական զորքն այստեղ
միացավ մուսուլմանների զորքին՝
ի սարսափ մուսուլմանների
թշնամիների
և ի նշան Նիկոլայի եղբայրության:

(*Ժարգանանությունը՝ Գ.Հ.*)

Առաջին քառատողը Օրլովը չհավանեց, իսկ երկրորդը դուր չեկավ Մուրավյովին, քանի որ «քաղաքական հանգամանքների հնարավոր փոփոխության դեպքում գրությունը կդառնար ոչ տեղին»¹⁴: Մուրավյովը որոշեց թողնել հասարակ գրությունն՝ «Կանգնեցվել է ռուսական զորքի կողմից 1833 թ. հունիսի 25-ին»: Հետո երբ սկսեցին հաշվել, թե ինչքան ժամանակ կպահանջվի տառերը պատրաստելու համար, պարզ դարձավ, որ վարպետները չեն հասցնի տառերը պատրաստել մինչև ռուսական զորքի հեռանալը: Ի վերջո, որոշվեց թողնել միայն ամսաթիվը՝ 1833 թ. հունիսի 25, որը նաև համընկնում էր Ռուսաստանի կայսր Նիկոլայ I-ի ծննդյան օրվա հետ:

Հարկ է նշել, որ սուլթանը ևս դեմ չի եղել այս հուշարձանի կանգնեցմանը: Ավելին՝ ռուսական զորքի հեռանալուց հետո նրա ցանկությամբ հուշարձանի վրա ոսկեգոծված տառերով գրվել է բանաստեղծ Պարթև փաշայի հեղինակած քառատողը¹⁵.


Bu sahraya misafir geldi gitdi asker-i Rusi
Bu seng-i kuh-peyker yadigar olsun nişan kalsın
Vifaki devleteynin böyle dursun sabit ü muhkem
Lisan-i dostanda dastanı çok zaman kalsın.

Ռուս զինվորն այս դաշտ եկավ ու գնաց որպես հյուր,
այս սարալանջի քարը թող հիշատակ լինի, որպես նշան մնա:
Երկու պետությունների համերաշխությունը թող մնա այսպես կայուն ու
ամուր,
և թող հարատև լինի բարեկամության խոսքը:

(*Թարգմանությունը՝ Գ.Հ.*)

¹⁴ Նույն տեղում, էջ 414:

¹⁵ Ünal F., նշված աշխ., էջ 200.



«Москов-таш» — камень москвитов. Памятник на азиатском берегу Босфора в ознаменование пребывания здесь Российских войск в 1833 году.», Անհայտ հեղինակ, Մոսկվայի պետական պատմական թանգարան:

1834 թ. փետրվարին տեղի է ունեցել հուշարձանի պաշտոնական բացման արարողությունը, որին նաև ներկա է եղել ռուս դիվանագետ Պյոտր Չիխաչևը¹⁶: 1849 թ. Ստամբուլ այցելած ռուս նկարիչ Չախարովն իր հուշերում խոսում է Մոսկվայի քարի մասին՝ նշելով, որ այն կանգուն է իր 2 գրություններով հանդերձ¹⁷: Օսմանյան շրջանի պատմաբան Ահմեդ Լյութֆիի վկայությամբ՝ 1875 թ. հուշարձանը դեռևս կանգուն է եղել¹⁸: Թուրք պատմաբան Օսման Էրզինը 1914 թ. անձամբ է եղել Բեյքոզում և իր աշխատություններից մեկում տեղեկություններ է հաղորդել հուշարձանի վիճակի մասին: Էրզինի տեղեկությունների համաձայն՝ այդ ժամանակ հուշարձանի վրայի ռուսերեն գրությունն ամբողջովին ջնջվել էր, իսկ թուրքերենն արդեն դարձել էր անընթեռնելի: Այնուհետև հեղինակը գրում է, որ Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին հուշարձանը ոչնչացվել է Վանիքոյ գյուղի վարժարանի ուսուցիչների ու աշակերտների կողմից¹⁹: Մեկ այլ պատմաբան՝ Աբդես Նիմեթ Քուրաթը, նշում է, որ հուշարձանի ոչնչացումն ուղեկցվել է դիռլի և գուռնայի նվազակցությամբ²⁰: Հատկանշական է պատմաբան Օսման Էրզինի կարծիքը՝ Մոսկվայի քարի ոչնչացման վերաբերյալ. «Անկախ նրանից, թե ում կողմից և ինչպես է ստեղծվել, եթե արդարացված էր մի անգամ կառուցված հուշարձանի ոչնչացումը, այդ սև քարից (Մոսկվայի քարը – Գ.Հ.) առավել անհրաժեշտ էր ոչնչացնել այդ գեղեցիկ պալատը (Բեյքոզի

¹⁶ Նույն տեղում, էջ 201:

¹⁷ Захаров И., Путевые записки русского художника, Санкт Петербург, 1854, стр. 13.

¹⁸ Lütfi A., Vak'antüvis Ahmet Lütfi Efendi Tarihi, 4-5: (Çev. Yücel Demirel), İstanbul, 1999, s. 723.

¹⁹ Ergin O., Türk Maaruf Tarihi: C. I-II, İstanbul, 1977, s. 537.

²⁰ Kurat A.N., Türkiye ve Rusya, Ankara, 1990, s. 63.

ապարանքը – Գ.Հ.), քանի որ այդ սև քարը հիշեցնում էր կանչով օգնության հասած թշնամու աջակցությունը, որի շնորհիվ կայսրությունը կարողացել է ևս մի փուլ գոյատևել: Իսկ պալատը հիշեցնում է մի ապստամբություն, որի ժամանակ հպատակ զորքը եկել էր մինչև կայսրության սիրտը և նրան մղում էր անկման: Սև քարն ինչքան էլ որ ամոթալի էր²¹, պալատն էլ նույնքան վիատեցնող և մտածելու տեղիք տվող է: Այնուամենայնիվ կրկնեմ, որ նմանատիպ հուշարձանները քանդելը ոչ մի դեպքում ճիշտ չէ»²²:

Փաստենք նաև, որ այսօր Մոսկվայի քարից որևէ հատված պահպանված չէ: Հատկանշական է, որ ավելի ուշ հենց հուշարձանի տեղում ծածանվում էր ամերիկյան Standard Oil Company of New York նավթային ընկերության դրոշը²³:

19-րդ դարում Օսմանյան կայսրության տարածքում կառուցված ռուսական մյուս հուշարձանը գտնվում է Ստամբուլի իշխանաց կղզիներից Հեյբեղիադայում. այն կառուցվել է 1830-ականներին ռուս սպաների միջոցներով²⁴: Հուշարձանը նվիրված է 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում գոհված ռուս զինվորներին, կառուցված է 300 ռուս զինվորների եղբայրական գերեզմանի վրա²⁵: Հուշարձանը հրեշտակի տեսքով է, ամբողջովին կառուցված է սպիտակ մարմարից, պատվանդանին նշված է, որ այնտեղ հանգչում են ռուս զինվորները, ովքեր մահացել են գերության մեջ 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ, նաև առկա է Աստվածաշնչյան գրություն՝ «Больши сей любви никтоже имати да кто душу свою положит за други своя» (Զկա ավելի մեծ սեր սեփական հոգին ընկերների համար տվողի սիրուց): Հուշարձանն ի սկզբանե կառուցված է եղել Հեյբեղիադայի ռազմածովային ակադեմիայի տարածքում, սակայն 1971 թ. մարտի 12-ի ռազմական միջամտությունից հետո տեղափոխվել է

²¹ Ժողովրդի շրջանում Մոսկվայի քարն անվանում էին ամոթի հուշարձան (Utanc abidesi):

²² Ergin O., նշված աշխ., էջ 537-538.

²³ Ünal F., նշված աշխ., էջ 197.

²⁴ В Турции ищут средства на восстановление памятника российским воинам 19.08.2014 <https://iz.ru/news/575489> (մուտքի ամսաթիվ- 10, 04, 2020)

²⁵ Նույն տեղում:

ակադեմիայի տարածքից դուրս²⁶: 2014 թ. գարնանը՝ ռուս-ուկրաինական բախումների ընթացքում, հուշարձանը ենթարկվել է վանդալիզմի: Այն ամբողջովին ներկել էին Ուկրաինայի դրոշի գույներով՝ կապույտ և դեղին, ինչպես նաև վիրավորական և հակառուսական գրառումներ էին արել հուշարձանի վրա²⁷: Մակայն շուտով Ստամբուլում ռուսական հյուպատոսության, տեղի ռուս համայնքի և այլոց շնորհիվ հուշարձանը հնարավոր եղավ վերականգնել, նաև վերականգնվեցին հրեշտակի գլուխը և թևերը, որոնք ժամանակի ընթացքում կտրվել էին: 2015 թ. հունիսին ռուսական ուղղափառ եկեղեցու պատվիրակությունը՝ ռուս եպիսկոպոս Իոանն Նարո-Ֆոմինսկու գլխավորությամբ Մոսկվայի և համայն Ռուսիո պատրիարք, նորին սրբություն Կիրիլ Առաջինի օրհնությամբ ժամանել էր Ստամբուլ, որի ընթացքում նաև այցելել էր Հեյբելիադայի հուշարձան և օրհնության կարգ կատարել²⁸: Հատկանշական է, որ Ստամբուլի ռուսական համայնքն ամեն տարի մայիսի 9-ի հաղթանակի տոնի առթիվ այցելում է Հեյբելիադայի հուշարձան և հարգանքի տուրք մատուցում ռուս զինվորների հիշատակին: Հեյբելիադայում է անցնում նաև «Անմահների գնդի» շքերթը²⁹:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ Թուրքիայի տարածքում գոյություն ունեցած ռուսական հոշարձանները բացի ճարտարապետական կամ պատմա-մշակութային նշանակությունից ունեցել են և ունեն քաղաքական, քարոզչական ենթատեքստ: Թուրքական այլատյաց քաղաքականությունը դրսևորվել է նաև ռուսական հոգևոր ու պատմական հուշարձանների նկատմամբ և կարող ենք ասել, որ սրանում ևս արտահայտված է մշակութային եղեռնը: Այսինքն՝ և օսմանյան, և հանրապետական իշխանությունները ռուսական հուշարձանները դիտարկել են որպես սիմվոլիկ թշնամական

²⁶ Rus Esirler İçin Heybeliada’da Anma Töreni Düzenlendi (11. 05. 2015) <https://www.adalardan.net/rus-esirler-icin-heybeliadada-anma-toreni-duzenlendi/> (մուտքի ամսաթիվ- 10, 04, 2020)

²⁷ В Турции ищут средства на восстановление памятника российским воинам (19. 08. 2014) <https://iz.ru/news/575489> (մուտքի ամսաթիվ- 10, 04, 2020)

²⁸ Епископ Наро-Фоминский Иоанн совершил Литургию в Константинополе (18. 06. 2015) <https://mospat.ru/ru/2015/06/18/news120246/> (մուտքի ամսաթիվ- 10.04. 2020)

²⁹ Акция "Бессмертный полк" прошла в Турции (17, 05, 2017) <https://rg.ru/2017/05/07/akciiabessmertnyj-polk-proshla-v-turcii.html> (մուտքի ամսաթիվ- 10.04. 2020)

թիրախներ, որոնք հնարավորության և առիթի դեպքում ենթակա էին ոչնչացման:

ПЕРВЫЕ РУССКИЕ ПАМЯТНИКИ В ОСМАНСКОЙ ИМПЕРИИ (19-ЫЙ ВЕК – НАЧАЛО 20-ГО ВЕКА)

Гор Оганнисян

(Резюме)

Русские памятники в Турции, которые турки называли “памятниками стыда”, являлись символами поражений турок в русско-турецких войнах. Русские памятники, возведённые в Османской Империи, а потом в Турции, имеют важное место в ряду обстоятельств, свидетельствующих о неустойчивой сущности русско-турецких отношений. Русские памятники в Турции начали появляться с первой половины 19-го века. Часть памятников была разрушена по стечению разных обстоятельств, а некоторые дошли до наших дней. Даты возведений и разрушений этих памятников в свою очередь символизируют то или иное развитие в русско-турецких отношениях.

FIRST RUSSIAN MONUMENTS IN THE OTTOMAN EMPIRE (19TH CENTURY- EARLY 20TH CENTURY)

Gor Hovhannisyan

(Summary)

Russian monuments in Turkey, which were called “the monuments of shame” by the Turks themselves, have been the symbols of the Turkish defeat in Russo-Turkish wars. Russian monuments, erected in the Ottoman Empire and then in the Republic of Turkey, do have an important place in the row of events indicating the unstable nature of Russo-Turkish relations. In Turkey, Russian monuments first appeared in the early 19th century. Part of these monuments were destroyed by different reasons and some of them managed to survive to the present day. The dates of the construction and the destruction of these monuments also symbolize certain turn of events in Russo-Turkish relations.